



ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝

ԿԱՊԿՈՒ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆԵՐԸ

անուն, ազգանուն

Պարսև Գրիգորյան

Հետազոտող ուսուցիչ՝

Լուսինե Գրիգորյան

դպրոց

Մենթոր ուսուցիչ՝

Սարգենիկ Գամաղյան

անուն, ազգանուն

ԱՐՄԱՎԻՐ 2022թ.

ՆԵՐԱՇՈՒԹՅՈՒՆ

Ներառական կրթությունը գործընթաց է, որը հենվում է բոլոր երեխաների, այդ թվում՝ նաև ԿԱՊԿՈՒ և սոցիալապես սահմանափակ հնարավորություններ ունեցող, կրթություն ստանալու իրավունքի վրա: Այն արձագանքում է բոլոր սովորողների բազմազան կարիքներին, մեծացնում է նրանց մասնակցությունը ուսումնական, մշակութային ու համայնքային կյանքին: Ներառական կրթությունը հենված է այն համոզմունքի վրա, որ բոլոր երեխաներին կրթելը հանրակրթական համակարգի պարտականությունն է: Ներառական կրթության հիմքում ընկած գաղափարախոսությունը բացառում է երեխաների ցանկացած խտրականություն, ապահովում է հավասար վերաբերմունք բոլոր մարդկանց նկատմամբ, ստեղծում է հատուկ պայմաններ հատուկ պահանջմունքներ ունեցող երեխաների համար: Այսպիսով, ներառական կրթությունը՝ ընդունում է, որ բոլոր երեխաները կարող են սովորել, ընդունում և հարգում է երեխաների տարբերությունները՝ նպաստում է բոլոր երեխաների կարիքներին համապատասխան կրթական գործընթացի կազմակերպումն ու իրականացումը ենթադրում է դպրցների վարած բաղաբականության վերակառուցում և համապատասխանեցում աշակերտների առանձնահատկություններին ենթադրում է ուսումնական, մշակութային, համայնքային միջոցառումների աշակերտների ներգրավվածության աստիճանի բարձրացում խտրականության դեմ պայքարի լավագույն միջոց է Ուղղված է փոխելու հասարակության վերաբերմունքը սոցիալական անհավասարության հանդեպ: ԿԱՊԿՈՒ երեխաների ուսուցման կազմակերպումը հիմնվում է հետևյալ ելակետային դրույթների վրա՝ ԿԱՊԿՈՒ երեխաները մյուսների հետ հավասար իրավունքներ ունեն հանրակրթական հաստատության ընտրության և պարտադիր պետական կրթական ծրագրերի յուրացան իրավունք ունեն օգտվելու հատուկ մանկավարժական, առողջապահական, հոգեբանական, սոցիալական և այլ ծառայություններից՝ անկախ իրենց ընտրած ուսումնական հաստատությունից երեխայի համակողմանի, բնականոն զարգացման տեսանկյունից նախընտրելի է նրա կրթության կազմակերպումը առանց ընտանիքից և հասարակությունից նրանց մեկուսացման: Ներառական կրթությունը, որպես կրթական նոր մոտեցում, ենթադրում է, որ առաջընթացն ավելի հավանական կլինի, եթե մենք ընդունենք, որ երեխաների դժվարությունները դպրոցների կազմակերպման ձևերի և ուսումնական մեթոդների ոչ ճկուն լինելու հետևանք են: Ենթադրում է նաև, որ անհատական տարբերությունները ոչ թե լուծման ենթական պրոբլեմներ են, այլ ուսումնական գործընթացը հարստացնող հնարավորություններ:

Ըստ ԿԱՊԿՈՒ երեխաների կրթության մասին ՀՀ օրենքի (ընդունված 2005թ. Մայիսի 25) ներառական կրթությունը կարող է կազմակերպվել այն ուսումնական հաստատություններում, որոնք ապահովված են կրթության առանձնահատուկ պայմաններով:

1 ԿԱՊԿՈՒ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆՑՈՒՄՆ ՈՒ ՆԵՐԳՐԱՎՈՒՄԸ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏԿԱԾՈՒԹՅՈՒՆ

Արմավիրի մարզի Գայ, Աղավնատուն և Ջրառատ համայնքների հանրակրթական դպրոցներում անցկացված մշտադիտարկման արդյունքում վեր են հանվել մի շարք խնդիրներ, որոնց բախվում են ինչպես ԿԱՊԿՈՒ անձինք, այնպես էլ ուսուցչական անձնակազմը և ծնողները: Ինչպես արդեն նշվել է, համակողմանի պատկեր ստանալու համար խորքային հարցազրույցներ են անցկացվել ԿԱՊԿՈՒ աշակերտների, նրանց ծնողների, ուսուցիչների, բազմամասնագիտական թիմի անդամների և դպրոցի տնօրենների հետ: Ընդհանուր առմամբ 3 դպրոցներից ներգրավված են եղել 32 ուսուցիչներ, ովքեր աշխատում են 19 ԿԱՊԿՈՒ երեխաների հետ՝ 12-ական ուսուցիչ՝ Գայ և Աղավնատուն համայնքների հանրակրթական դպրոցներից, 8-ը՝ Ջրառատ համայնքի հանրակրթական դպրոցից: Յուրաքանչյուր երեխայի հետ աշխատող 2-ական ուսուցիչ է մասնակցել հարցազրույցին, եղել են նաև համընկնումներ, երբ մեկ դասարանում սովորում են մեկից ավելի ԿԱՊԿՈՒ աշակերտներ: Ուսուցիչները, փորձելով առանձնացնել ներառական կրթության դրական և բացասական կողմերը, մեծամասնությամբ դրական կողմն են համարում ԿԱՊԿՈՒ աշակերտների սոցիալականացումը և շփման հաստատումը, իսկ բացասական կողմը համարում են ժամանակի սղությունը, դասապրոցեսի խանգարումը, ուշադրության և ժամանակի ճիշտ բաշխումը: Միաժամանակ ինչպես նաև խտրական վերաբերմունք և դժգոհություն դրսևորող պատասխաններ: «Դրականն այն է, որ ԿԱՊԿՈՒ երեխաները դուրս չեն մնում հասարակությունից, շփվում են, փակվել են հատուկ դպրոցները: Բացասականն այն է, որ վիրավորանքներ են զգում, տարբերվում են, ճնշվում, լարվածություն է ուսուցչի համար: Նմանները նմանների հետ պետք է շփվեն:» ԿԱՊԿՈՒ աշակերտին դասավանդող ուսուցիչ «Նմանները նմանների հետ պետք է շփվեն» արտահայտությունը նշվել է մի շարք ուսուցչների կողմից, ինչը ինքնին փաստում է տվյալ անձանց կողմից ներառականության գաղափարի մերժման մասին: Այսինքն՝ ուսուցչական անձնակազմի տվյալ ներկայացուցիչների մոտ կա մոտեցման խնդիր, ինչը հավելյալ խոչընդոտ է ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատանքում: Մասնակից ուսուցիչներից միայն 5-ն են նշել հատուկ դպրոցների պահպանման անհրաժեշտությունը՝ պնդելով, որ ֆիզիկական խնդիրների դեպքում հնարավոր է որոշակի հաջողություններ գրանցել սակայն վարքաբանական և մտավոր խնդիրների դեպքում չափազանց բարդ է: Նշված ուսուցիչները աշխատում են վարքաբանական և մտավոր խնդիրներ ունեցող աշակերտների հետ :

ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատանքում առկա հիմնական բարդությունները և խնդիրները ընդհանրացնելով՝ կարող ենք ասել, որ անհատական խնդիրների հետ մեկտեղ ուսուցիչների մեծամասնությունը առանձնացնում է կենտրոնացումը, պասիվությունը, մյուս աշակերտների ուշադրության շեղումը որպես հաճախ հանդիպող և դասապրոցեսի արդյունավետության վրա ազդող գործոններ: Նշված խնդիրները լուծելի են ուսուցչի օգնականի արդյունավետ ներգրավման միջոցով: Ինչպես հայտնի է, , ուսուցչի օգնականը շատ դեպքերում ներգրավված չէ ողջ դասապրոցեսին: Միայն մեկ ԿԱՊԿՈՒ աշակերտի

դեպքում է նշվել, որ աշակերտը ողջ դասապրոցեսի ընթացքում ստանում է ուսուցչի օգնականի աջակցությունը: Իսկ համաձայն Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի՝ ուսուցչի օգնականների թիվը որոշվում է տվյալ դպրոցում սովորողների միջին տարեկան թվի 10 տոկոսի հաշվարկի հարաբերակցությունից, այսինքն՝ բոլոր ԿԱՊԿՈՒ աշակերտների դեպքում ողջ դասապրոցեսի ընթացքում ուսուցչի օգնականի ներկայությունը պրակտիկորեն հնարավոր չէ, և այն սահմանվում է ԱՌԼՊ-ով:

Մոնիթորինգի շրջանակներում խնդիր էր դրվել ուսումնասիրել ԿԱՊԿՈՒ երեխաների սոցիալականացումը համադասարանցիների հետ շփման տեսանկյունից, ուստի՝ խորքային հարցազրույցի հարցաշարում ներառվել են նաև այս խնդիրը շոշափող մի քանի հարցեր: Այն հարցին, թե ովքեր են ԿԱՊԿՈՒ աշակերտների ընկերները, ուսուցիչների մեծամասնությունը նշում է՝ համադասարանցիները: Նրանք պնդում են, որ ԿԱՊԿՈՒ երեխաները մեկուսացված չեն և նրանց նկատմամբ չկա խտրական վերաբերմունք: Սակայն այս պնդումների միջև հակասականություն է նկատվում, երբ խնդիրը դիտարկվում է այլ հարցերի համատեքստում: Մասնավորապես վարքաբանական և խոսքի խանգարումներ ունեցող ԿԱՊԿՈՒ աշակերտների վերաբերյալ ուսուցիչների կողմից հնչել են բնորոշումներ, որ նրանք «ագրեսիվ» են և այդ պատճառով համադասարանցիների հետ շփումը չի ստացվում:

ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատանքում հաջողության հասնելու կարևորագույն գործոններից է համարվում ուսուցիչ-ծնող արդյունավետ համագործակցության հաստատումը: Այս տեսանկյունից պատկերը միանշանակ չէ, ուսուցիչները փաստում են ծնողների մի մասի ուշադիր և հոգատար վերբերմունքի և համատեղ աշխատանքի արդյունքում գրանցված փոքրիկ հաջողությունների մասին: Սակայն որոշ դեպքերում այս համագործակցությունը չի ստացվում ծնողների գբաղվածության, ոչ բավարար ներգրավվածության արդյունքում: Ինչպես շատ դեպքերում, այնպես էլ այս մշտադիտարկման թիրախ հանդիսացող ԿԱՊԿՈՒ աշակերտների դեպքում մեծ մասը ունի նաև սոցիալական և ընտանեկան խնդիրներ, ինչը նրանց նկատմամբ կրկնակի խտրականության պատճառ է դառնում: Նշված գործոնները հիմք են հանդիսանում նաև ծնողների ոչ բավարար տեղեկացվածության և դրա արդյունքում երեխաների կրթական և դաստիարակչական գործընթացում պասիվ ներգրավվածության և դպրոց-ուսուցիչ համագործակցության տապալման համար:

Նրանք միաժամանակ փաստում են, որ երեխաների հետ աշխատող բոլոր ուսուցիչները դրականորեն են տրամադրված և ամեն կերպ աշխատում են որևէ արդյունքի հասնել: Ծնողներն ընդհանուր առմամբ դրական են գնահատում ուսուցիչների և բազմամասնագիտական խմբի ջանքերն ու աշխատանքը: Ծնողներից ոմանք նշել են, որ իրենք չեն կարողանում միջամտել երեխայի կրթական գործընթացին ժամանակի սղության, նաև անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների բացակայության պատճառով: Ուստի՝ երեխաների մոտ նկատելի տեղաշարժեր չկան:

Լշված երեք հանրակրթական դպրոցներում ներառված 19 ԿԱՊԿՈՒ երեխաների մի մասը, ույթեր ունեն խոսքային խանգարումներ և վարքաբանական խնդիրներ, չեն մասնակցել հարցազրույցին: Մասնակից ԿԱՊԿՈՒ աշակերտների պատասխանների վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ ոմանք ընկճված են և շփման խնդիր ունեն: Մի քանի ԿԱՊԿՈՒ աշակերտների կողմից հնչեցված պատասխաններն էլ փաստում են ընտանիքում երեխայի նկատմամբ վերաբերմունքի, ու դրա շնորհիվ բարոգությանի հաղթահարման մասին: Պետք է նշենք, որ կան նաև դեպքեր, երբ ԿԱՊԿՈՒ երեխան ի սկզբանե սովորել է հատուկ կրթական հաստատությունում, այնուհետև տեղափոխվել հանրակրթական դպրոց: Նրանց դեպքում ներառման խնդիրն ավելի բարդ է, ինչպես փաստում են ծնողները և հենց աշակերտները, քանի որ սովորել են այլ մեթոդներով: Նրանց մոտ միաժամանակ սոցիալականցման խնդիրն ավելի սուր է. համադասարանցիների հետ չի հաջողվում շփում հաստատել:

Հետազոտական խնդիրներ և նպատակներ

Հետազոտության նպատակն է գնահատել ՀՀ-ում ներառական կրթության ծրագրի առկա վիճակը՝ վեր հանելով ռիսկերը և խնդիրները, պոտենցիալ հնարավորությունները և ապահովելով առաջարկներ, այդպիսով խրախուսելով որոշումների կայացումը և համակարգի հետագա բարելավման առումով (ընդհանուր ներառվածության կոնտեքստում): Հիմնվելով ծրագրի առաջարկում նկարագրված հետազոտության նպատակների վրա, սույն հետազոտությունն ուղղված է հարցադրումների երեք բլոկների պարզաբանմանը՝ իրենց համապատասխան ենթահարցերով:

2. Հետազոտության նպատակը

Ուսումնասիրել ԿԱՊԿՈՒ դպրոցական տարիքի երեխաների ֆիզիկական զարգացման և ֆիզիկական պատրաստվածությամբ առանձնահատկությունները

Հետազոտության օբյեկտը

ԿԱՊԿՈՒ դպրոցականի տարիքի երեխաների ֆիզիկական զարգացման և ֆիզիկական պատրաստվածության գործընթացն է:

Հետազոտության առարկան

ԿԱՊԿՈՒ դպրոցականի ֆիզիկական զարգացման և պատրաստվածությունը նպաստող միջոցները, մեթոդները, առանձնահատկությունները, արդյունավետությունը, դժվարությունները:

Հետազոտության նպատակը, առարկան, օբյեկտը առաջը բերեցին հետևյալ խնդիրները,

Ուսումնասիրել 27-ում համընդհանուր ներառական կրթության շրջանակներում ԿԱՊԿՈՒ դպրոցականի ֆիզիկական զարգացման ու ֆիզիկական պատրաստվածության առանձնահատկությունները:

3. Կրթության մեջ կիրառվում է երկու հիմնական տեսակ ամփոփիչ ԵՎ ձևավորող որոնք տարբեր նպատակների համար են

Ամփոփիչ գնահատումը իրականացվում է ուսումնառությունից հետո և արտացոլում է սոցորոդի առաջընթացը օրինակ կիսամյակի կամ ուսումնական տարվա ավարտին: ամփոփիչ գնահատումը համարվում է գիտելիքի գնահատում և ներառում է առաջադիմության ստուգման տարբեր թեստեր:

Ձևավորվող գնահատումը կատարվում է ուսուցման ընթացքում և արտացոլում է սովորողի ընթացիկ ձեռքբերումները, բնորոշ են հաճախակի (շաբաթական, ամսական) 1-5 բոլոր չափումները:

Ձևավորող գնահատումը տեղեկություն է տալիս աշակերտի սովորելու և ուսուցման արդյունավետության մասին սա գնահատում է հանուն ուսումնառության և աշակերտների մի խմբի առաջընթացը մեկ այլ խմբի հետ համեմատելու նպատակ չի հետապնդում, այն նախատեսված է հասակակիցներից հետ մնացող կամ հատուկ ուշադրության կարիք ունեցող սովորողներին ուսուցման հետագծին հետևելու համար:

Ուսումնական ծրագրի վրա հիմնված չափում

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ծրագրի վրա հիմնված չափումն ձևավորող գն

ահատման տեսակ է, նախատեսված սովորողների տարական գիտելիքների և կարողությունների առաջընթացը գնահատելու համար այն նախատեսված է օգնելու համար հանրակրթական դպրոցի ուսուցիչներին ուսումնական ունակությունների յուրահատուկ խանգարում ունեցող սովորողների համար արդյունավետ ուսուցում կազմակերպելու հարցում

Ուսումնական ծրագրի վրա հիմնված չափման մեթոդաբանության հիմքում դիտարկումներն են, որոնք կիրառվում են սովորողի վարքի փոփոխություններին հետևելու համար:

Դիտարկման և վարքագծի վրա հիմնված մոտեցման առավելությունն է, որ գնահատումը

Ա. արձանագրում է աշակերտի առաջընթացը տվյալ պահի դրությամբ

Բ. կարող է կիրառվել միայն կարճ ժամանակամիջոցների համար, ստուգաթերթերով, վարքի հաճախակի դիտարկման միջոցով:

Ուսումնական ծրագրի վրա հիմնված չափման նախապատրաստումն ու իրականացումը հիմնվում են կրթական ծրագրերը բխող նյութերի վրա

Խորհուրդներ ուսուցիչներին՝

- ▶ Օգտագործեք տարբեր գնահատումների միջոցով հավաքված տվյալներ ԱՌԴ-ի խնդիրներ, նպատակներ, մշակելու համար, դրանք պետք է հիմնված լինեն SMART սկզբունքների վրա (կոնկրետ չափելի, իրատեսական, համապատասխան և ժամանակին):
- ▶ Հավաքեք բավարար քանակի տվյալներ ելնելով աշակերտի կրթական խնդիրներից և զարգացման առանձնահատկություններից, որպեսզի հետևեք նրա առաջընթացին և դասավանդումը կազմակերպեք դրանց համապատասխան (ելակետային 3 և ուսուցման արդյունավետության գնահատման 6 տվյալ):
- ▶ Փոփոխեք ձևավորող և ամփոփիչ գնահատումները սովորողի կարիքներին համապատասխանացնելու և նրա ուսումնական առաջընթացին հետևելու համար
- ▶ Արդյունավետորեն օգտագործեք ձեր հավաքած գնահատման տվյալները, և դրանք ընդունեք որպես դասավանդման մեթոդների և կրթական միջավայրի փոփոխության ազդակներ
- ▶ Համագործակցել ձեր դպրոցների բազմամասնագիտական թիմի անդամների և ռեսուրս կենտրոնների մասնագետների հետ
- ▶ Ներգրավեք ծնողներին գնահատման գործընթացում

4. ԿԱՊԿՈՒ ԴՊՐՈՅԱԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԸ ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԴԱՍԱԺԱՄԻՆ

Ըստ Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոնի կողմից կատարված ուսումնասիրության, Հայաստանում գործում է ոչ թե ներառական, այլ ինտեգրված կրթություն: Այսինքն, ԿԱՊԿՈՒ երեխան ինտեգրվում է դպրոց, կրթություն է ստանում բոլորի հետ միասին, սակայն նրա նկատմամբ կիրառվում է տարբերակված մոտեցում: Ուսուցիչները բավարար ժամանակ չեն տրամադրում երեխայի հետ աշխատանքին: Թույլ է ծնողների հետ համագործակցությունը: Հասարակության մի հատվածը կարծրատիպային վերաբերմունք է դրսևորում ԿԱՊԿՈՒ երեխաների հանդեպ: Ներառական կրթություն իրականացնող դպրոցներում բացակայում են տարրական պայմանները հաշմանդամություն ունեցող երեխաների համար: Դպրոցները չունեն մատչելի թեթևարթակներ, սանհանգույցներ, ինչպես նաև համապատասխան մասնագետ-ուսուցիչներ: Ենթակառուցվածքի բացակայության, մանկավարժական անձնակազմին չվստահելու, հասարակության կարծրատիպային մոտեցման պատճառով

ձևողների մի մասը ձգտում է երեխային թաքցնել շրջապատից, չուղարկել դպրոցական կրթության:

Միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատությունների ֆիզիկական կուլտուրան անցկացվում է ուսումնառության ամբողջ ընթացքում՝ հետևյալ ձևերով.

- ֆիզկուլտուրայի ուսումնական դասեր,
- ֆիզկուլտուրային առողջարարական միջոցառումներ ուսումնական օրվա ռեժիմում (առավոտյան մարմնամարզություն, ֆիզկուլտ-դադարներ, արտադրական կամ միջանկյալ մարմնամարզություն),
- մարզական և ֆիզկուլտուրային մասսայական միջոցառումներ ուսումնական պարապմուտքներից ազատ ժամանակ (մարզական խմբակներ, տուրիստական արշավներ, մրցումներ, մրցաշարեր և այլն),
- առողջության օրեր:

Միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատությունների ֆիզիկական կուլտուրայի ուղղությամբ տարվող ուսումնական աշխատանքի կազմակերպման հիմնական ձևը ֆիզկուլտուրայի դասն է, որտեղ իրականացվում է ծրագրային ուսումնական նյութի ուսուցում և ամրակայում: Ֆիզկուլտուրայի ուսումնական դասերը նշվում են բոլոր մասնագիտությունների գծով ուսումնական պլաններում, հիմնական և ֆակուլտատիվ դասերի դասացուցակում: Ֆիզկուլտուրայի դասերն իրականացնում են հաստատության ֆիզիկական դաստիարակության ղեկավարները և դասախոսները՝ ուսումնառության ամբողջ ընթացքում: առարկայի ուսումնական նյութը բաժանվում է երկու մասի՝ հիմնական և ընտրովի: Ֆիզիկական կուլտուրայի ծրագրային հիմնական ուսումնական նյութերն իրենց մեջ ներառում են տեսական տեղեկություններ, մարմնամարզական վարժություններ, աթլետիկական վարժություններ, մարզախաղեր՝

Հայաստանում ներառական կրթություն իրականացվում է հիմնականում երևանում և մասամբ՝ մարզերում: Այդ պատճառով էլ մարզերում հաշմանդամություն ունեցող երեխաները դուրս են մնում կրթական համակարգից: Ներառական կրթության առանձնահատկությունն այն է, որ կրթությունը պետք է հիմնվի բազմազանության վրա՝ հաշվի առնելով յուրաքանչյուր երեխայի առանձնահատկությունները և կարիքները: Դպրոցը, իր հերթին, պետք է բացահայտի և չեզոքացնի ուսումնական գործընթացում լիարժեք մասնակցությանը խոչընդոտող գործոնները բոլոր աշակերտների համար: Իսկ պետական մակարդակով ներառական կրթության համար պետք են խորքային և երկարաժամկետ փոփոխություններ, դրանց իրականացմանն ուղղված աջակից կառույցներ և ռեսուրսներ, ինչպես օրինակ՝ ուսուցիչների, վարչական անձնակազմի, աշակերտների և ծնողների հատուկ կենտրոններ: Մինչև 2005թ. ներառական դպրոցները ֆինանսավորվում էին երկու ձևով՝

տիպային և փորձնական: Այսինքն ԿԱՊԿՈՒ երեխաների համար ֆինանսավորումը մոտ 4-5 անգամ ավել էր՝ տարեկան 400.000-ից 500.000 դրամ, մինչդեռ մյուս երեխաներինը 100.000 ՀՀ դրամ էր: Այժմ ֆինանսավորումը կատարվում է ըստ կարիքի: Ներառական դպրոցների տնօրենների մի մասը գտնում է, որ հատկացվող գումարը չի բավարարում ուսուցիչների և մասնագետների վերապատրաստմանը, ներառական կրթության համար անհրաժեշտ նոր մեթոդների, ուսումնական նյութերի ու խաղերի անընդհատ թարմացմանը: Մյուս խնդիրն այն է, որ կան դպրոցներ, որոնք ներառական կրթությանը վերաբերվում են որպես ֆինանսական նոր աղբյուրի՝ ներկայացնելով ներառական կրթության կարիք ունեցող աշակերտների ավելի մեծ թիվ, քան իրականում կա:

Հայաստանի տարածքում առկա 1464 դպրոցներից միայն 291-ն են պաշտոնապես համարվում ներառական կրթություն իրականացնող: Սա կազմում է առկա դպրոցների մոտ 20 տոկոսը: Այս դպրոցների մեծ մասը երևանում են: Մինչդեռ Ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) համաձայն, 2016թ. դրությամբ Հայաստանում ապրում է հաշմանդամություն ունեցող մինչև 18 տարեկան 8016 մարդ: 2012թ. ՀՀ կրթության և գիտության նախարարը հայտարարել էր, որ այլևս գոյություն չեն ունենալու ներառական կրթություն իրականացնող և չիրականացնող դպրոցներ: Այսինքն, Հայաստանում գործող բոլոր հանրակրթական դպրոցները մինչև 2025թ. պետք է դառնան ներառական, հասանելի և մատչելի լինեն բոլոր երեխաների համար: Սակայն ներառական դպրոցների աճի դինամիկան ցույց է տալիս, որ գործընթացը շատ դանդաղ է առաջ ընթանում: Տարեկան միջինը 16 դպրոցում է անցում կատարվում ներառական կրթության, բացառությամբ 2015 և 2016 թթ., երբ ներառական կրթություն սկսեցին իրականացնել համապատասխանաբար 43 և 72 դպրոցներ:

Ըստ Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոնի կողմից կատարված ուսումնասիրության, Հայաստանում գործում է ոչ թե ներառական, այլ ինտեգրված կրթություն: Այսինքն, ԿԱՊԿՈՒ երեխան ինտեգրվում է դպրոց, կրթություն է ստանում բոլորի հետ միասին, սակայն նրա նկատմամբ կիրառվում է տարբերակված մոտեցում: Ուսուցիչները բավարար ժամանակ չեն տրամադրում երեխայի հետ աշխատանքին: Թույլ է ծնողների հետ համագործակցությունը: Հասարակության մի հատվածը կարծրատիպային վերաբերմունք է դրսևորում ԿԱՊԿՈՒ երեխաների հանդեպ: Ներառական կրթություն իրականացնող դպրոցներում բացակայում են տարրական պայմանները հաշմանդամություն ունեցող երեխաների համար: Դպրոցները չունեն մատչելի թեթահարթակներ, սանհանգույցներ, ինչպես նաև համապատասխան մասնագետ-ուսուցիչներ: Ենթակառուցվածքի բացակայության, մանկավարժական անձնակազմին չվստահելու, հասարակության կարծրատիպային մոտեցման պատճառով ծնողների մի մասը ձգտում է երեխային թաքցնել շրջապատից, չուղարկել դպրոցական կրթության:

5. ԿԱՊԿՈՒ ԱԾԱԿԵՐՏՆԵՐ ԶԵՏ ԱՇՆԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ
ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԱՌԱՎԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԱՌԱՎԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ Զետագոտության շրջանակներում խնդիր էր դրվել նաև անդրադառնալ ուսուցիչների կողմից ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատանքներում կիրառվող հիմնական մեթոդներին: Խորքային հարցազրույցների արդյունքերի վերլուծությունը ցույց է տալիս, որ ուսուցիչները մեծամասամբ կարիք ունեն ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատանքի պրակտիկ մեթոդների վերաբերյալ գիտելիքների թարմացման: Հարցերին, թե ինչպիսի մեթոդներ են կիրառում և որն է ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատանքում առաջացած խնդիրների լուծումը, գրեթե բոլորի կողմից հնչում էր, որ կիրառում են անհատական մոտեցում և դիմում պարզեցված հարցերի կիրառմանը: Մասնակից բոլոր ուսուցիչները դժվարացան անվանել կոնկրետ մեթոդներ կամ պրակտիկ վարժություններ, որոնք կիրառում են ԿԱՊԿՈՒ աշակերտների ներգրավման համար: «Տեղում օգնում, ինտեգրում ենք խմբային աշխատանքներում, կյանքի հետ կապված իրենց օրինակների և պարզ հարցերի միջոցով հետաքրքրություն ենք առաջացնում և ներգրավում:» ԿԱՊԿՈՒ աշակերտին դասավանդող ուսուցիչ Աշակերտների միջև կապը և համագործակցությունը ամրապնդելու, ԿԱՊԿՈՒ աշակերտի նկատմամբ խտրականությունը բացառելու նպատակով ուսուցիչներից մեկը նշեց, որ ուսուցման ընթացքում առաջացած խնդիրները և բարդությունները լուծում է մյուս աշակերտների ներգրավման միջոցով, ինչը բավական արդյունավետ և խրախուսելի մոտեցում է: Մեթոդական խնդիրները, որին հանդիպում են հարցազրույցին ներգրավված գրեթե բոլոր ուսուցիչները բուհական կրթության բացի և վերապատրաստման պակասի արդյունք են: Ուսուցիչները փաստում են, որ կրթության և ուսումնական պրակտիկայի ընթացքում չեն ուսումնասիրել ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատանքի մեթոդներ, իսկ վերապատրաստումները, որոնք կազմակերպվել են, եղել են կարճատև:

Ներկայացված խնդիրների լուծումը ըստ օրենքի՝ բազմամասնագիտական թիմի և տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոնի ներկայացուցիչների ներգրավումն է, ովքեր տիրապետում են անհրաժեշտ բոլոր մեթոդներին և պետք է լրացնեն առաջացած բացերը: Ներգրավումն է, ովքեր տիրապետում են անհրաժեշտ բոլոր մեթոդներին և պետք է լրացնեն առաջացած բացերը: Ուսուցիչները ևս փաստում են, որ արդյունավետ համագործակցության պարագայում հնարավոր է հասնել արդյունքերի: Նշենք, որ հարցազրույցին մասնակցած ծնողները մեծամասամբ դրական են գնահատում բազմամասնագիտական թիմի աշխատանքը, սակայն նաև նշում են, որ շոշափելի արդյունքներ և փոփոխություններ երեխաների կրթական նվաճումներում, նաև վարքում դեռևս չկան: Ըստ ծնողների՝ կա ինչպես բազմամասնագիտական թիմի, այնպես էլ տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոնների ներգրավվածությունը մեծացնելու անհրաժեշտություն: «Եթե լավ աշխատեն, ինչ-որ խնդիրների չենք բախվի և կցանկանանք, որ տարածքային մասնագետներն ավելի հաճախակի գան մեր դպրոց:» ԿԱՊԿՈՒ աշակերտի ծնող Որոշ ծնողներ միաժամանակ նշել են, որ ԿԱՊԿՈՒ աշակերտների

համար հատուկ կահավորված, դիդակտիկ նյութերով հարուստ դասասենյակների առկայության դեպքում դասապրոցեսն ավելի հետաքրքիր կդառնա նրանց համար, սա նաև ուսուցչների համար որոշակիորեն լուծում կդառնա՝ հաղթահարելու ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատանքում առաջացած խնդիրները: Ուսուցիչները մեծամասամբ մշտադիտարկման թիրախ հանդիսացող ԿԱՊԿՈՒ աշակերտների գիտելիքները գնահատում են միջինից ցածր. շատերն ունեն տառաճանաչության խնդիր: Այսինքն՝ ներգրավված մասնագետների աշխատանքերի արդյունքում դեռևս ակնառու փոփոխություններ չեն գրացվել, թեև կան փոքրիկ հաջողություններ, և ծնողները դրական են գնահատում մասնագետների աշխատանքը և վերաբերմունքը: Համավարակով պայմանավորված կրթական ծրագրերի փոփոխությունները և որոշ ժամանակ դասերի հեռավար կազմակերպումն էլ իր հերթին ազդեցություն են ունեցել՝ խոչընդոտելով ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ արդյունավետ աշխատանքին: Ծնողներից մեկը նշում է, որ երեխայի խոսքի զարգացման, նաև կրթության գործընթացի պատշաճ կազմակերպման համար միայն դպրոցում կատարված աշխատանքները բավարար չեն, ուստի այլ մասնագետների դիմելու անհրաժեշտություն է առաջանում: Իհարկե նշվածը պահանջում է հավելյալ ռեսուրսներ և ժամանակ, ինչի հնարավորությունը ոչ բոլոր ԿԱՊԿՈՒ աշակերտները և ծնողներն ունեն: «Լավ մասնագետներ լինեն, ավելի ուշադիր լինեն երեխաների նկատմամբ, որ արդյունքի հասնեն, որ գոնե տառաճանաչ դառնան: Մենք մի բանի բան համատեղում ենք, որ արդյունք լինի, միայն դպրոցում չէր լինի ոչինչ: Երևի ժամանակի ընթացքում կհասնենք արդյունքի:» ԿԱՊԿՈՒ աշակերտի ծնող մասնակից ԿԱՊԿՈՒ աշակերտների պատասխանների վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ աշակերտներին գրավում են հատկապես կերպարվեստ, տեխնոլոգիա, ֆիզկուլտուրա առարկաները: Ինչպես հայտնի է, այս առարկաները խաղային տարրեր են ներառում և հիմնված են դիդակտիկ նյութերի հետ աշխատանքի վրա, ինչի պահանջն ունեն ԿԱՊԿՈՒ երեխաները: Մշտադիտարկման աշխատանքներում ներգրավված մասնագետներից մեկը նշում էր, որ հատուկ կրթական հաստատություններում ԿԱՊԿՈՒ աշակերտներն արհեստներ սովորելու և դրանց միջոցով իրենց կարողությունները զարգացնելու հնարավորություն ունեին, ինչի բացը ներկայումս նկատվում է հանրակրթական ծրագրերում և ԿԱՊԿՈՒ աշակերտների համար մշակված ԱՌԴՊ-ներում: Մշտադիտարկում իրականացրած 3 հանրակրթական դպրոցներից յուրաքանչյուրից հարցազրույցին մասնակցել է 1 ուսուցչի օգնական և 1 բազմամասնագիտական թիմի անդամ: Ինչպես նախկինում կատարված հետազոտությունները փաստում են, բազմամասնագիտական թիմի հետ կապված խնդիրներից մեկն այն է, որ հաճախ ներգրավված մասնագետներն ունենում են մեկ այլ կրթություն՝ թիմում ներգրավվելով բոլորովին այլ մասնագիտությամբ 4: Հարցազրույցների արդյունքում նկատեցինք, որնման խնդիր կա նաև մշտադիտարկման թիրախ հանդիսացող դպրոցներից մեկում, որտեղ սոցիալական մանկավարժի կրթությամբ անձը աշխատում է որպես հոգեբան: Այսինքն՝ այս մասնագետների դերերի և գործառույթների մասին պատկերացումները և տարանջատումները շարունակում են անհստակ լինել այս դպրոցի կտրվածքով: Հարցազրույցի մասնակից բազմամասնագիտական թիմի անդամները նշում են, որ հիմնական խնդիրներն առաջանում են ԱՌԴՊ-ների կազմման ընթացքում: Նաև նշվում է, որ ծնողների համար ևս

դժվարությամբ է ընդունվում երեխայի խնդիրներ ունենալու և ԱՌԴ-ով աշխատելու անհրաժեշտության փաստը: Նշենք նաև, որ այս մասնագետները մասնակցել են Տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից կազմակերպված ԱՌԴ-ների կազմման վերաբերյալ վերապատրաստման դասընթացներին: Նշվեց նաև, որ ըստ սահմանվածի յուրաքանչյուր ԿԱՊԿՈՒ երեխայի հետ աշխատանքի համար շաբաթական 25-50 րոպեն բավարար չէ, ինչի մասին փաստում էին նաև ԿԱՊԿՈՒ աշակերտների ծնողներն ու ուսուցիչները: Ուսուցչի օգնականները փաստում էին ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողների հետ սերտ համագործակցության մասին և նշում, որ հնարավոր է լինում արդյունքի հասնել բոլոր ներգրավված անձնանց ջանքերի և համագործակցության արդյունքում: Ուսուցչի օգնականներից մեկը նշում է, որ ծնողի և տնօրենի միջև համաձայնության դեպքում ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ հավելյալ աշխատանք են կատարում արտաժամյա՝ դասերից հետո: Նշվածը ևս փաստում է, որ արդյունավետ աշխատանքի համար մասնագետների ներգրավվածությունը ընդլայնելու կարիք կա: Ըստ նախատեսվածի՝ խորքային հարցազրույներ են անցկացվել նաև նշված հանրակրթական դպրոցների տնօրեն/փոխտնօրենների հետ: Մասնակից փոխտնօրեններից մեկը միանշանակ դեմ արտահատվեց ներառական կրթությանը՝ պնդելով, որ այն ոչ արդյունավետ է: Մյուսները նշում են, որ արդյունավետությունը բարձրացնելու համար կա հատուկ պայմանների ստեղծման անհրաժեշտություն: Այդ պայմանների ստեղծման և որպես ներառական կրթության հիմնական խոչընդոտ նշվեց ուսուցիչների հմտությունների պակասը: Թեև ուսուցիչների մի մասը անցել է համապատասխան կարճաժամկետ վերապատրաստումներ, սակայն դրանք բավարար չեն անհրաժեշտ արդյունքի հասնելու և մեթոդական խնդիրներն ու մոտեցումները լուծելու համար: Դպրոցներից մեկի տնօրենի կարծիքով՝ հատուկ պայմանների շարքում է նաև ԿԱՊԿՈՒ աշակերտների համար արհեստագործական դասերի կազմակերպումը, ինչը հիմնավորված կարող ենք համարել՝ հաշվի առնելով խորքային հարցազրույցների մասնակից ԿԱՊԿՈՒ աշակերտների հետաքրքրությունների և սիրած առարկաների շրջանակը. հիմնականում նշել էին կերպարվեստ և ֆիզկուլտուրա:

6. ՏԵՍՈՂՈՒԹՅԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՆԱՎՆԵՐԸ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՌՎՆՁՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Յայտնի է, որ տեսողության ֆունկցիայի խորը կամ մասնակի խանգարումը բացասաբար է անդրադառնում երեխաների ճանաչողական և ֆիզիկական զարգացման, շարժողական ոլորտի և տարածական կողմնորոշման ձևավորման վրա: Տեսողության կորստից հետո մարդը կորցնում է մի շարք կարողություններ և հմտություններ, սակայն, ամենակարևորը, կորցնում է տարածության մեջ կողմնորոշվելու կարողությունը: Տարածական կողմնորոշման կարողությունների և հմտությունների անբավարար զարգացումը, ինքնուրույն տեղաշարժման փորձի բացակայությունը զգալիորեն իջեցնում են տեսողության խանգարումներ ունեցող երեխաների շարժողական ակտիվությունը, առաջ են բերում շարժումներ

րի ձևավորման խանգարումներ, ինչը բացասաբար է անդրադառնում երեխաների առողջության, աշխատունակության, ուսումնական և աշխատանքային գործունեության վրա: Չտեսնող և թույլ տեսնող դպրոցականների տարածական կողմնորոշման կարողության ձևավորումն ու զարգացումը հնարավոր է իրականացնել հատուկ մշակված և կազմակերպված կրթական միջավայրում (M. A. Фарленкова, 1999; З. В. Плаксунова, 1998): Երեխաների զարգացման և դաստիարակության, ինքնուրույն կյանքի նախապատրաստման հիմնահարցերի հաղթահարման նպատակով նշանակալի կարևորություն ունեն շարժողական ակտիվության բարձրացման հարցերը: Այս տեսանկյունից հասարակության մեջ առավել խոցելի խավ են տեսողության խանգարումներ ունեցող երեխաները, ովքեր տարածական կողմնորոշման դժվարությունների հետևանքով ունեն սոցիալական միջավայրում ինքնուրույն հարմարվելու բազմաթիվ խնդիրներ: Շարժախաղերի միջոցով տեսողության խանգարումներ ունեցող կրտսեր դպրոցականների տարածական կողմնորոշման զարգացումը տիֆլոմանկավարժության արդի հիմնախնդիրներից է: Հայտնի է, սակայն, որ ոչ բոլոր վարժություններն ու խաղերը կարող են հավասարաչափ կիրառվել դպրոցում: Այս դեպքում պետք է հենվել տարբերակված մոտեցման, տեսողության խանգարման (աս տիճանի և դրա հետևանքով առաջացած երկրորդական խանգարումների), ինչպես նաև սովորողների տարիքային և անհատական առանձնահատկությունների վրա: Հանրակրթական դպրոցներում օգտագործվող մեթոդները ոչ միշտ են կիրառելի չտեսնող և թույլ տեսնող երեխաների հետ իրականացվող աշխատանքներում, քանի որ այս երեխաները դժվարանում են վերահսկել սեփական և այլ անձանց գործողությունները Ելնելով վերոհիշյալից՝ կարող ենք հավաստել, որ տեսողության խանգարումներ ունեցող կրտսեր դպրոցականների տարածական կողմնորոշման զարգացումը շարժախաղերի միջոցով խիստ արդիական է, քանի որ դրանք նման համակազմի համար մանկավարժական, սոցիալ-հոգեբանական և կենսական կարևոր նշանակություն ունեն:

Սույն մեթոդական ձեռնարկի նպատակն է ցույց տալ հանրակրթական դպրոցների ուսուցիչներին և դաստիարակներին չտեսնող և թույլ տեսնող երեխաների տարածական կողմնորոշման զարգացման հնարավոր ձևերը (միջոցներ, մեթոդներ, կրթական միջավայր)՝ ուղղված նշված խմբի երեխաների տարածական կողմնորոշման կարողությունների, ինքնուրույնության, ճարպկության, ճկունության, կոորդինացիայի դժվարությունները հաղթահարելու ունակությունների, ինչպես նաև մի շարք այլ հոգեկան գործընթացների ձևավորմանը: Հայտնի է, որ հանրակրթական դպրոցի ուսուցիչներն ու դաստիարակները, բազմամասնագիտական թիմի անդամները չունեն լիարժեք իրազեկում: Տարածական կողմնորոշման զարգացման ընթացքում տեսողության խանգարումներ ունեցող երեխաների՝ տարածության մեջ կողմնորոշվելու կարողության զարգացման վերաբերյալ մեթոդական ձեռնարկների բացակայությունը նույնպես դժվարեցնում է նշված աշխատանքների իրականացումը: Այդ առումով մեթոդական ձեռնարկում ներկայացված հատուկ միջոցները, մեթոդները և դրանց կիրառման մանկավարժական պայմանները կնպաստեն տարածական կողմնորոշման կարողության զարգացմանը: Ուսումնամեթոդական ձեռնարկում ներկայացված են չտեսնող և թույլ տեսնող կրտսեր դպրոցականների շարժախաղերի ու-

սուցման մեթոդական մոտեցումներ ըստ ձայնային կողմնորոշիչների, օրինակելի վարժություններ, հանձնարարություններ և շարժախաղեր չտեսնող և թույլ տեսնող երեխաների տարածական կողմնորոշման զարգացման համար, տեսողության ֆունկցիայի խանգարումներ ունեցող երեխաների տարածական կողմնորոշման զարգացմանն ուղղված շարժախաղերի կազմակերպման առանձնահատկությունները: Սույն ուսումնամեթոդական ձեռնարկը նախատեսված է հատուկ մանկավարժների, ուսուցիչների, դաստիարակների, հոգեբանների և ծնողների համար: Ձեռնարկից կարող են օգտվել նաև մանկավարժական թուկերի ուսանողները

6.1 ՉՏԵՍՆՈՂ ԵՎ ԹԹԱՅԼ ՏԵՍՆՈՂ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԾԱՐԺԱԽԱՂԵՐԻ ՈՒՍՈՒՑ-ՄԱՆ ՄԵԹՈՂԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ՝ ԸՍՏ ԱՍՅՆԱՅԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉՆԵՐԻ

Չտեսնող և թույլ տեսնող երեխաների համար ձայնային ազդանշանը ճիշտ ընկալելու կարողությունը և դրա վրա հենվելով տարածական կողմնորոշումը կարևոր կենսական նշանակություն ունի: Այս կարողությունների ուսուցանումը և դրանց կատարելագործումը պետք է անցկացվի տարբեր միջոցների և հատուկ մեթոդական մոտեցումների լայն կիրառմամբ:

1. Ավանդու ձայնային մեթոդ Բերենք չտեսնող և թույլ տեսնող կրտսեր դպրոցականների՝ ձայնային կողմնորոշիչների կիրառմամբ շարժախաղերի ուսուցման մի քանի մեթոդներ և մեթոդական հնարներ.

- տվյալ խաղում կիրառվող ձայնային ազդանշանի հետ ծանոթացում,
- ձայնի աղբյուրի աշխատանքի ռեժիմի և բնույթի ցուցադրում,
- դահլիճի տարբեր կետերում ազդանշանի տրման ցուցադրում,
- ծանոթացում ձայնով կողմնորոշվելով տեղաշարժվելու հնարավոր տարբերակներին,
- ձայնային ազդանշանի տրման տեղի փոփոխման հետ կապված տեղաշարժման հնարավոր տարբերակների հետ ծանոթացում: 2. Ծարժողական մեթոդ.
- Ծանոթացում հիմնական խաղային գործողություններին,
- խաղային գործողության կատարում՝ ցույց տալով ձայնային աղբյուրի տեղը,
- խաղային գործողության կատարում՝ ցույց տալով ձայնային աղբյուրի փոփոխման տեղը,
- խաղային գործողության կատարում՝ ուսուցչի օգնությամբ կողմնորոշվելով ըստ ձայնի,
- խաղային առաջադրանքի կատարում՝ ինքնուրույն կողմնորոշվելով ըստ ձայնային ազդանշանի:

3. Համակարգային մեթոդ: Տարբեր տեսակի ձայնային կողմնորոշիչներ կիրառելով խաղային առաջադրանքների կատարում Չտեսնող և թույլ տեսնող կրտսեր դպրոցականներին ձայնային ազդանշանների կիրառմամբ շարժախաղեր ուսուցանելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ մեթոդական ցուցումները.

- պարտադիր հետևել դիդակտիկ սկզբունքներին,

- մթթոդական հևարները պետք է ուղղված լինեն շարժողական, խաղային և կողմնորոշիչ հմտությունների հաջորդական և համակարգային ձևավորմանը,
- լայն կիրառելի խոսքը,
- ձայնային ազդանշանով կողմնորոշվելու ժամանակ ցուցաբերել ակտիվ և պասիվ օգնություն,
- նայել խաղի արդյունքները, գնահատել ինչպես խաղային գործողությունները, այնպես էլ սովորողների կողմնորոշվելու կարողությունները,
- լայնորեն կիրառել ձայնային կողմնորոշիչները ինչպես շարժախաղերի, այնպես էլ ֆիզիկուլտուրայի դասերի և արտադասարանական պարապմունքների ժամանակ,
- չտեսնող և թույլ տեսնող երեխան պետք է ոչ միայն մասնակցի խաղին, մրցմանը, այլ նաև ակտիվ մասնակցություն ունենա դրա նախապատրաստմանը:

6.2 Տեսողության խանգարումներ ունեցող երեխաների

տարածական կողմնորոշման զարգացումը շարժախաղերի միջոցով

Տարածական կողմնորոշման կարողությունների և հմտությունների անբավարար զարգացումը, ինքնուրույն տեղաշարժման փորձի բացակայությունը զգալիորեն իջեցնում են տեսողական խանգարումներ ունեցող երեխաների շարժողական ակտիվությունը, առաջ են բերում շարժումների ձևավորման խանգարումներ, ինչը բացասաբար է անդրադառնում երեխաների առողջության, աշխատունակության, ուսումնական և աշխատանքային գործունեության վրա:

Պետական մանկավարժական համալսարանի կողմից ստեղծված այս ձեռնարկի նպատակն է ցույց տալ հանրակրթական դպրոցների ուսուցիչներին և դաստիարակներին չտեսնող և թույլ տեսնող երեխաների տարածական կողմնորոշման զարգացման հնարավոր ձևերը՝ ուղղված նշված խմբի երեխաների տարածական կողմնորոշման կարողությունների, ինքնուրույնության, ճարպկության, ճկունության, կոորդինացիայի դժվարությունները հաղթահարելու ունակությունների, ինչպես նաև մի շարք այլ հոգեկան գործընթացների ձևավորմանը:

Այս ձեռնարկում ներկայացված են չտեսնող և թույլ տեսնող կրտսեր դպրոցականների շարժախաղերի ուսուցման մթթոդական մոտեցումներ ըստ ձայնային կողմնորոշիչների, օրինակելի վարժություններ, հանձնարարություններ և շարժախաղեր չտեսնող և թույլ տեսնող երեխաների տարածական կողմնորոշման զարգացման համար:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով ուսումնասիրելով ԿԱՊԿՈՒ դպրոցականի ֆիզիկական զարգացման և ֆիզիկական պատրաստվածության առանձնահատկությունները, եկանք այն եզրակացության, որ

- Դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցիչը պետք է անցին համապատասխան վերապատրաստում, որպեսզի ունենա անհրաժեշտ գիտելիքներ, կարողություններ հմտություններ, որոնք թույլ են տալիս կիրառելու ֆիզկուլտուրայի դասապրոցեսին ԿԱՊԿՈՒ աշակերտի հետ աշխատելու ժամանակ՝ ելնելով նրա կրթական կարիքից և ֆիզիկական տվեալներից:
- Համընդհանուր ներառական կրթության մեջ ԿԱՊԿՈՒ երեխաների համար դպրոցում բացառապես կարևոր նշանակություն ունի ֆիզկուլտ-առողջապահական միջոցառումների ճիշտ կազմակերպումը ինչպես ուսումնական, այնպես էլ արտադասարանական պարապունքների ժամանակ
- Այս աշակերտը պետք է կառուցվի ուսումնական ծրագիր որոշակի խնդիրների հաշվառումով, ֆիզիկական վարժությունների հասանելի ձևերի օգտագործմամբ: Այն ներառում է ֆիզկուլտ-առողջապահական, ֆիզկուլտ մասսայական, սպորտային միջոցառումներ:

Ներառական կրթությունը ցանկացած երեխայի իրավունքների պաշտպանության կարևոր բաղադրիչներից է: Այն բացառում է ամեն տեսակ խտրականություն երեխաների նկատմամբ և սովորելու հնարավորություն է տալիս հանրակրթական դպրոցում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) անձանց: Ներառական կրթությունը մշակվում է ավելի ճկուն մոտեցմամբ, որպեսզի բավարարի տարբեր կրթական պահանջներ ունեցող երեխաներին, և նրանք նույնպես դպրոցում սովորելու հավասար իրավունքներ ու հնարավորություններ ունենան: Հայաստանը համընդհանուր ներառական կրթությունը հռչակում է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք: Իսկ ի՞նչ է արվում այդ ուղղությամբ:

Հայաստանի տարածքում առկա 1464 դպրոցներից միայն 291-ն են պաշտոնապես համարվում ներառական կրթություն իրականացնող: Սա կազմում է առկա դպրոցների մոտ 20 տոկոսը: Այս դպրոցների մեծ մասը երևանում են: Մինչդեռ Ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) համաձայն, 2016թ. դրությամբ Հայաստանում ապրում է հաշմանդամություն ունեցող մինչև 18 տարեկան 8016 մարդ: 2012թ. ՀՀ կրթության և գիտության նախարարը հայտարարել էր, որ այլևս գոյություն չեն ունենալու ներառական կրթություն իրականացնող և չիրականացնող դպրոցներ: Այսինքն,

Հայաստանում գործող բոլոր հանրակրթական դպրոցները մինչև 2025թ. պետք է դառնան ներառական, հասանելի և մատչելի լինեն բոլոր երեխաների համար: Սակայն ներառական դպրոցների աճի դինամիկան ցույց է տալիս, որ գործընթացը շատ դանդաղ է առաջ ընթանում: Տարեկան միջինը 16 դպրոցում է անցում կատարվում ներառական կրթության, բացառությամբ 2015 և 2016 թթ., երբ ներառական կրթություն սկսեցին իրականացնել համապատասխանաբար 43 և 72 դպրոցներ:

Ըստ Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոնի կողմից կատարված ուսումնասիրության, Հայաստանում գործում է ոչ թե ներառական, այլ ինտեգրված կրթություն: Այսինքն, ԿԱՊԿՈՒ երեխան ինտեգրվում է դպրոց, կրթություն է ստանում բոլորի հետ միասին, սակայն նրա նկատմամբ կիրառվում է տարբերակված մոտեցում: Ուսուցիչները բավարար ժամանակ չեն տրամադրում երեխայի հետ աշխատանքին: Թույլ է ծնողների հետ համագործակցությունը: Հասարակության մի հատվածը կարծրատիպային վերաբերմունք է դրսևորում ԿԱՊԿՈՒ երեխաների հանդեպ: Ներառական կրթություն իրականացնող դպրոցներում բացակայում են տարրական պայմանները հաշմանդամություն ունեցող երեխաների համար: Դպրոցները չունեն մատչելի թեթահարթակներ, սանհանգույցներ, ինչպես նաև համապատասխան մասնագետ-ուսուցիչներ: Ենթակառուցվածքի բացակայության, մանկավարժական անձնակազմին չվստահելու, հասարակության կարծրատիպային մոտեցման պատճառով ծնողների մի մասը ձգտում է երեխային թաքցնել շրջապատից, չուղարկել դպրոցական կրթության:

Օգտագործված գրականության ցանկ

1. Կրթության մասին ՀՀ օրենքը,
2. ՀՀ-ում ներառական կրթություն իրականացնող դպրոցների ցանկը,
3. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՐԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ ՄՄՈՒՅ-ՆԵՐՈՒՄ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ Զասմիկ Մինասյան
4. ԿԱՊԿՈՒ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ՄՇԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ <>ՍՈՑԻԱԼ-ԿՐԹԱԿԱՆ ԶԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
5. Ազարյան Ռ. Ն., Երեխաների տեսողությունը: Մեթոդական ձեռնարկ, Երյան, 2008, 47 էջ:

